Հարց 1. Ո՞վ է իրական շահառուն:

Կախված իրավաբանական անձի գործունեության ոլորտից՝ վերջինիս իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, կամ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանված չափանիշներին համապատասխանող ֆիզիկական անձը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավաբանական անձի իրական շահառուն այն ֆիզիկական անձն է, որը.

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ վերոնշյալ «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն են կազմում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու իրավաբանական անձինք, որոնց դեպքում իրական շահառուն այն ֆիզիկական անձն է, որը.

ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում (բացառությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ անկախ ունեցած ձայների մեծությունից իրական շահառու հանդիսանալու դեպքերի),

բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը,

գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ (բացառությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ անկախ ստացված օգուտների մեծությունից իրական շահառու հանդիսանալու դեպքերի),

դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ վերոնշյալ «ա»-«դ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Հարց 2. Ո՞վ կարող է իրավաբանական անձի անունից ներկայացնել ԻՇ հայտարարագիր:

Իրավաբանական անձի անունից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր կարող է ներկայացնել՝

1. իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի հանդես գալու իրավունք ունեցող անձը՝ ընկերության գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը, տնօրենը, նախագահը և այլն),
2. իրավաբանական անձի անունից լիազորագրի հիման վրա հանդես եկող անձը:

Լիազորագրի օրինակը կարող եք ներբեռնել հետևյալ հղմամբ՝ https://www.e-register.am/am/docs/563 :

Հարց 3. Արդյո՞ք ԻՇ հայտարարագրի ներկայացման համար տրված լիազորագիրը պետք է վավերացված լինի նոտարական կարգով:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար տրված լիազորագիրը կարող է տրվել հասարակ գրավոր ձևով՝ առանց նոտարական վավերացման:

Հարց 4. Ի՞նչ տարբերակով պետք է ներկայացնել ԻՇ հայտարարագիրը:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգում հայտարարագրի լրացման միջոցով:

Էլեկտրոնային համակարգի հասանելիության խափանման պատճառով պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հայտարարագիրն առցանց ներկայացնելու անհնարինության դեպքում հայտարարագիրը պետական ռեգիստր կարող է ներկայացվել թղթային եղանակով:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեցող իրավաբանական անձը «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքում հայտարարագիրը կարող է լրացնել թղթային եղանակով:

Հարց 5. Ի՞նչ է նշանակում ցուցակված բաժնետոմսերով ընկերություն:

Ցուցակված բաժնետոմսերով ընկերությունն այն ընկերությունն է, որի բաժնետոմսերը համապատասխանում են որոշակի չափանիշների և ցուցակված են իրական շահառուների բացահայտման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին համարժեք կարգավորվող շուկաներում:

Հարց 6. Ի՞նչ է նշանակում «կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը»:

Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը կարող է դրսևորվել իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ, իրավաբանական անձի նկատմամբ իրական (փաստացի) վերահսկողության այլ միջոցներով (օրինակ՝ իրավաբանական անձի

նկատմամբ վերահսկողության իրականացում իրավական գործիքների, այդ թվում՝ կնքված գործարքների ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով), իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ հանդիսանալու հիմքով և այլն:

Հարց 7. Ի՞նչքան պետ. տուրք է նախատեսված հայտարարագիրը լրացնելու համար:

Իրական շահառուների վերաբերյալ վերաբերյալ առաջին հայտարարագիրը ներկայացնելու համար պետական տուրք սահմանված չէ:

Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխության հիմքով ներկայացվող հայտարարագրի դեպքում վճարվող պետական տուրքը 10.000 ՀՀ դրամ է:

Հարց 8. Եթե կազմակերպության միակ սեփականատերը պետությունն է, ապա ի՞նչ տվյալներ պետք է լրացնել:

Պետության մասնակցության դեպքում հայտարարագրի «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը:

Որպես իրական շահառու լրացվում են իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի (գլխավոր տնօրեն, տնօրեն, նախագահ և այլն) տվյալները:

Հարց 9. Ե՞րբ պետք է լրացնել նոր հայտարարագիրը:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում: Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխման դեպքում դրանք ենթակա են հայտարարագրման իրավաբանական անձին հայտնի դառնալուց հետո՝ անմիջապես, բայց ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:

Անկախ նշված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

Հարց 10. Ինչպե՞ս հաշվարկել օրինակ 3 միջանկյալ իրավաբանական անձանց միջոցով անուղղակի մասնակցության չափը հայտարարագիր ներկայացնող կազմակերպության կանոնադրական կապիտալում: (կարող ենք հենց օրինակով ներկայացնել, այսինքն՝ X-հայտարարագիր ներկայացնող ընկերություն, Y՝ միջանկյալ, որն X-ում ունի 100 տոկոս բաժնեմաս, Z, որն էլ Y-ում ունի 80 տոկոս ու A-ն, որը Z-ում 80 տոկոս մասնակից է)

Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը:

Սույն դեպքում անուղղակի մասնակցության չափը հայտարարագիր ներկայացնող կազմակերպության կանոնադրական կապիտալում հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1. X-ում Y միջանկյալ ընկերության մասնակցությունը 100 տոկոս է,
2. Քանի որ Z միջանկյալ ընկերության մասնակցությունը Y միջանկյալում 80 տոկոս է, ապա X-ում Z միջանկյալ ընկերության մասնակցությունը կլինի 80 տոկոս (100% x 80%),
3. Քանի որ A միջանկյալ ընկերության մասնակցությունը Z միջանկյալում 80 տոկոս է, Z միջանկյալ ընկերության մասնակցությունը Y միջանկյալում 80 տոկոս է, իսկ վերջինիս մասնակցությունն X-ում 100 տոկոս, X-ում A միջանկյալ ընկերության մասնակցությունը կկազմի 64 տոկոս (100% x 80% x 80% = 64%):